Ռուբէն Ջալալեան և Տրդատ Վարդանեան, Երևանի հայ հասարակութեան կողմից. 9) պ. Ռուբէն Շաքանեան, Բաթումի կաթօլիկ հայերի կողմից. 10) տիկին Թամարա Կաճկաճեան, Բագուի հայ տիկինների կողմից. 11) բժիշկ Թադէոս Զաքարեան, Բաթումի հայ հասարակութեան կողմից. 12) պ. Ստեփան Քոսեան, Բաթումի Ծովեանեան գործարանի հայ բանուորների կողմից. 13) պ. Բագրատ Շիւեանց, Բագուի հայ վաճառականութեան կողմից. 14) պ. Ա. Վաչեանց, Բագուի հայ ինժեներների և «Մասիս» նաւթահանքի ծառայողների կողմից. 15) տիկին Գ. Աթաբէկեան, Շուշու հայ կանանց կողմից 16) Գրիգոր քահանայ Բաբաքեխեան, Գանձակի հայ հոգևորականների կողմից. 17) պ. Թանդեան, Ռոստովի և Նոր-Նախիջևանի հայերի կողմից. 18) պ. Փ. Մարգանեան, Բագուի հայ հաշուապահների կողմից. 19) պ. Կոստանեան, Երևանի թեմի հայ դպրոցների կողմից. 20) Օր. Աննա Փուղինեան, Բագուի հայ ուսուցիչների կողմից. 21) Աբել Ապրեսեան, Բաթումի թատերասէրների կողմից. 22) Ս. Շխիեան, Գանձակի հայ երիտասարդութեան կողմից. 23) Յարութիւն Տէր-Մկրտչեան, Բագուի հայ առեւտրականների կողմից. 24) Արշակ Լալազարեան, Սև քաղաքի գործակատարների կողմից. 25) Յովհաննէս Ծատուրեան, Առաքել Ծատուրեանի կողմից. 26) պ. Կ. Կրասիլնիկեան, Բալախանի գործակատարներից կողմից. 27) պ. Խանդամիրեան, Բագուի եւրոպական հայ դերձակների կողմից. 28) պ. Ս. Մուպայաճեան, Կարսի հայ վաճառականութեան կողմից:

(Կը շարունակվի)

## ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մեր լրագրի անմոռանալի խմբագրի վաղահաս մահուան բօթը կայծակի արագութեամբ տարածվելուց յետոյ մեր քաղաքի ամեն դասակարգերի և շրջանների մէջ, մեր տեղական թէ հայ և թէ ռուս լրագիրներն ևս այդ անսպասելի և բօթաբեր լուրի ազդեցութեան տակ, իրանց լրագիրների համարներում համակրական յօդուածներ նուիրեցին մեր անփոխարինելի խմբագրի յիշատակին: Ահա թէ ինչ գրեց ռուս «Кавказъ» լրագիրը.

«Հայ հասարակութիւնը և հայ գրականութիւնը ծանր և դժուար վարձատրելի կորուստ ունեցան: Երէկ, դեկտեմբերի 19-ին, վախճանվեց ամենաժողովրդական հայ հրապարակախօս, «Մշակ» լրագրի խմբագիր Գրիգոր Երեմեան Արծրունին: Հետևեալ անգամին յետաձգելով հանգուցեալի կեանքի և գործունէութեան մասին տեղեկութիւնները, մենք պարտք ենք համարում մեր խորին ցաւակցութիւնը յայտնել հայ հասարակութեան կրած ցաւալի կորուստի համար Գ. Արծրունու վաղահաս մահուան պատճառով, Արծրունու, որը տպագրական խօսքի ամենաաչքի ընկնող և ամենահամակրելի գործիչներից մինն էր Կովկասում:»

«Тифл. Листокъ» լրագիրը.

«Երէկ, 19 դեկտեմբերի, 1 ժամ 45 րօպէին թօքերի բորբոքումից վախճանվեց Գրիգոր Երեմեան Արծրունին: Գերեզման իջաւ նա, ով քսան և հինգ տարի շարունակ արթնացնում էր միտքը, հրաւիրում էր իր եղբայրակիցներին դէպի լաւագոյն ձըգտումներ, ով դաստիարակեց մէկ ամբողջ սերունդ, որի անունը սովորականից դուրս յարգանքով արտասանվում էր հայ հասարակութեան բոլոր շերտերում:

Հայ հասարակութիւնը, քսան և հինգ տարուց աւելի ղեկավարված լինելով Գրիգոր Արծրունու շիտակ, անկեղծ և վերին աստիճանի մարդասէր համամարդկային գաղափարներով, կորցրեց երէկ իր ամենալաւ անդամին, ուսուցչին և հոգատար դաստիարակին, որը իր կարճատև, բայց բազմաշխատ կեանքը նուիրեց ազգի ծառայութեանը, որը իր ժողովրդի բարօրութեան համար իր անձն ամբողջապէս տուեց, որը սիրում էր հայերին և հոգս էր տանում նրանց մասին այնպէս, որպէս կարող է միայն սիրել և հոգս տանել չափազանց սիրող մայրը...

Երկու տարի է միայն անցել այն օրից, որ Ռուսաստանի հայերը, Թիւրքիայի հայերը, Եգիպտոսի, Հնդկաստանի և հեռաւոր Ամերիկայի հայերը տօնում էին Գրիգոր Արծրունու փառաւոր գրականական գործունէութեան քսան և հինգամեակը, իսկ այժմ նոյն հայերին վիճակվում է վերջին] հրաժեշտը տալ նոյն Գրիգոր Արծրունուն, վիճակվում է վերջին «մնաս բարեաւն» ասել այն մարդուն, որն այնպէս ջերմ սիրում էր և աւետարանի խօսքերով իր անձը դրեց իր հօտի վրա:

Սակայն միայն հայ ժողովուրդը չէ, որ ողբում է այդ անփոխարինելի կորուստը. ողբում է նրան և Կովկասի ամբողջ ինտելիգենտ հասարակութիւնը, և մանաւանդ ողբում է այդ կորուստը Թիֆլիսի և ամբողջ Անդրկովկասի լրագրական աշխատողների փոքրաթիւ ընտանիքը,...

Ներշնչված ամենալաւ գաղափարներով, ուսեալ և բարձր զարգացման տէր լինելով, Գրիգոր Արծրունին հեռու էր որ և է ազգային խտրութեան գաղափարից, հեռու էր կուսակցական լինելուց այդ բառի նեղ մտքով. Նրա գործերի, խօսքերի և յօդուածների մէջ և նրա ամբողջ կեանքի մէջ արտափայլում էր սիրոյ, եղբայրութեան և միութեան գաղափարը: Անկեղծ, ուղղամիտ, խորին կերպով համոզված թէ իր հայեացքները, իր գաղափարներն արդար են և համամարդկային, Գրիգոր Արծրունին անհամբերութեամբ սպասում էր նրանց իրագործվելուն, բայց ճակատագիրը այլ կերպ էր կարգադրել...

Գրիգոր Արծրունին մեռաւ, բայց չը մեռան նրա մտքերը, չը մեռան ժողովրդի այն հազարաւոր անհատները, որոնք կրթվել են «Մշակի» վրա...

Ռուսաց ինտելիգենտ հասարակութիւնը, ցանկանալով ծանօթանալ հայերի դրութեան հետ, նրանց բարքերի, կենսական և այլ պայմանների հետ, նրանց հայեացքների հետ, միշտ ճիշդ և հարուստ տեղեկութիւններ էր քաղում և կը քաղէ «Մշակից»... Գրիգոր Արծրունին միայն մէկ բան էր ցանկանում. նա ցանկանում էր, որ իր եղբայրակիցների մասին նոյնպէս դատեն, որպէս որ նրանք են իսկապէս... Ռուսներից իւրաքանչիւրը, ցանկանալով ծանօթանալ հայ ժողովրդի իսկական դրութեան հետ, դիմում էր և կը դիմէ այն յաւիտենական յիշատակարանին, որն իրանից յետոյ թողեց Գրիգոր Արծրունին «Մշակի» բազմաթիւ համարների ձևով, որին նա նուիրեց իր ամբողջ կեանքը, փառաւոր կրթութիւն առած մարդու իր ամբողջ ապագան, տուեց իր ամբողջ մեծ կարողութիւնը...

Մենք չենք գրում հանգուցեալ անմոռանալի գրողի բնաւորոշումը,—թարմ գերեզմանի առջև միտքը կանգ է առնում, ձեռքը դադարում է գրելուց,—մենք միայն ընդհանուր գծերով ցանկանում ենք հաղորդել այն զգացմունքները, որոնց այդպէս անսպասելի կերպով, այդպէս յանկարծակի առաջ է բերում Գրիգոր Արծրունու մահվան ցնցող փաստը... Նոր չէր արդեօք որ մենք տեսնում էինք հանգուցեալ գրողին մեր շարքերում, նոր չէր արդեօք որ մենք լսում էինք նրա կենդանի, նրա համոզված, նրա շիտակ և ջերմ խօսքը, և ահա այժմ կանգնած ենք նրա անշունչ նշխարքի առջև: Ճակատագրի օրէնքներն անողոք են... Մեզ մնում է ցանկանալ մի բան միայն. այն է, որ հանգուցեալ գրողի գաղափարներով դաստիարակված հայ հասարակութիւնը իր սրտի խորքերում ընդմիշտ պահպանէր իր ուսուցչի. իր դաստիարակի և հօր պատգամները»:

«Нов. Обозрѣніе» լրագիրը. «Հայ մամուլը մի ծանր կորուստ ունեցաւ: Երէկ, շաբաթ օր, դեկտեմբերի 19-ին վախճանվեց յայտնի հայ պուբլիցիստ Արծրունին, «Մշակ» լրագրի խմբագիր Գրիգոր Երեմեան Արծրունին: Մահը խլեց հայերից հասարակական ամենալաւ գործիչներից մէկին: Պատկառելի պուբլիցիստի կորուստն անկասկած արձագանք կը գտնի ամեն տեղ, ուր որ ապրում են հայերը, և մանաւանդ Կովկասում, որի ամենախուլ անկիւններում, մինչև անգամ ազգաբնակութեան ստորին խաւերի մէջ, Գրիգոր Արծրունին մեծ ժողովրդականութիւն ունէր որպէս տաղանդաւոր ժուռնալիստ և հասարակութեան ամենալաւ մասի թանգագին գաղափարների անխոնջ թարգման: Հանգուցեալի կեանքի և գործունէութեան մասին մանրամասն տեղեկութիւնները կը տանք այս օրերս: Առայժմ կասենք, որ անփոխարինելի պուբլիցիստի վախճանի տխուր լուրը հայ հասարակութեան և մանաւանդ երիտասարդութեան վրա, ամենածանր տպաւորութիւն ունեցաւ: Մեր երկրին լաւ յայտնի Գրիգոր Արծրունու գործունէութիւնը, որպէս ժուռնալիստի, այնքան կենդանի էր, որ դժուար է հաշտվել նրա կատարելապէս դադարման հետ: Հանգուցեալը, որպէս յայտնի է, հայկական մամուլի ամենագլխաւոր հիմնադիրներից մէկն էր Կովկասում: Մինչև նրա երևան գալը երբեք հայ մամուլը և հասարակութեան մէջ գոյութիւն չունէր այնպիսի սերտ կապ. մինչև նրա երևան գալը հրապարակագրողի ջերմ, համոզված խօսքը չէր հարթում ճանապարհը դէպի ընթերցող հասարակութեան մասսայի սիրտը: Հանգուցեալ Արծրունին, առօրեայ կենսական հոգսերի մէջ խորասուզված հայ հասարակութեան մէջ նմանում էր այն արթնացնող ժամացոյցին, որը չէ թոյլ տալիս քնել հասարակական ինքնաճանաչութեանը և անտես առնել հասարակական կեանքի խնդիրները: Բազմակողմանի ուսում առած, անկախ, ամբողջապէս նուիրված հասարակական գործին, ջերմ պաշտպան իր գաղափարների, Արծրունին շուտ չի գտնի իրան արժանաւոր յաջորդ հայ լրագրութեան աղքատ ոյժերի մէջ: Այնքան աւելի ևս զգալի է հայերի համար այդ ինքնուրոյն և աչքի ընկնող գործիչի կորուստը:

(Կը շարունակվի)

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 27 դեկտեմբերի

«Մշակի» № 143-ի մէջ տպած իմ խնդիրքին համաձայն, հանգուցեալ Գրիգոր Արծրունին առաջարկել էր ինձ օգնելու Միւնխէնի ուսանող՝ նկարիչ Յակոբեանին:

Յարգելով անմոռանալի Արծրունու առաջարկութիւնը, սրանով յայտնում եմ որ այն ութ հարիւր րուբլին այս յունվարից, երկու տարի շարունակ կը ստանայ Յակոբեան, համարվելով ստիպենդիատ յանուն Գրիգոր Արծրունու:

Խնդրում եմ «Մշակի» խմբագրութեան յայտնել պարոնի հասցէն փողն ուղարկելու համար:

Արսէն Կրասիլնիկեանց

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բազմաթիւ հեռագիրներ ստացանք արդէն, որոնցով մեզ հաղորդում են, որ կիրակի օր, դեկտեմբերի 27-ին գաւառական քաղաքներում հոգեհանգիստներ կատարվեցան Գրիգոր Արծրունու յիշատակին:

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի ռուսաց դրամատիկան խումբը, կիրակի օր, դեկտեմբերի 27-ին՝ Գրիգոր Արծրունու թաղման առիթով, յետաձգեց իր ներկայացումը:

—

Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեան մեր խմբագրութեան երկու անդամների՝ պ.պ. Տէր-Մարկոսեանի և Մալումեանի անունով ուղղել է հետևեալ տողերը. «Ձեմ կարող ձեզ՝ որպէս սգաւորների մխիթարել, քանի որ ես էլ սգում եմ մի անմոռանալի կորուստ, որ իբրև համազգային՝ ծանր լինելով ամեն մի անկեղծ և զգայուն հայի համար, կրկնապատիկ ծանր է հանգուցեալի թանգագին բարեկամութիւնը վայելողիս համար: Վաղուց արտասուք չը թափած աչքերս առանց արտասուքի չը կարացին որոշել ձեր հեռագրի բառերը:»

—

Կովկասեան հայոց Բարեգործական ընկերութեան խորհուրդը առաջարկելու է ընդհանուր ժողովին պահել Գրիգոր Արծրունու անունով՝ մի մշտական ստիպենդիատ որ և է համալսարանում:

—

Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեան իր կողմից՝ ներկայացուցիչ էր նշանակել Սարգիս քահանայ Բէգնազարեանին՝ Գրիգոր Արծրունու թաղման ներկայ լինելու համար:

—

Գրիգոր Արծրունու դագաղի վրա դրած պսակների, այլ և մակագրութիւնների և ներկայացուցիչների լիակատար ցուցակը կը տպագրենք յունվարի 1-ի համարում միանգամից, և այդ պատճառով անցեալ համարում տպած ցուցակի շարունակութիւնը այս անգամ ընդհատում ենք:

—

Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը ուղարկել է Գրիգոր Արծրունու թաղման կարգադրիչ յանձնաժողովին հետևեալ պաշտօնական գրութիւնը. № 1105. «Հոգաբարձութիւնս՝ ըստ օրագրի խրոյ ի 23 դեկտեմբերի ամսոյս № 43, միաձայն եզրակացուցեալ է. 1) դնել պսակ ի վերայ դագաղի Արծրունւոյ մակագրութեամբ. «ի Ներսիսեան դպրոցէ Գրիգորի Արծրունւոյ, և զկատարումն այսօրիկ յանձն առնել պ. Ա. Մ.-Ազարեանց. 2) ներկայ լինել անդամոց հոգաբարձութեանս, ուսուցչաց, աշակերտաց և երգեցիկ խըմբի ի յուղարկաւորութեան հանգուցելոյն. 3) յատկացուցանել ի գումարաց դպրոցիս յանուն Արծրունւոյ զերկու հարիւր րուբլիս վասն օժանդակութեան չքաւոր երթեկ աշակերտաց դպրոցիս և բաշխել զայն նոցա, և 4) զայսմ կարգադրութիւն ծանուցանել կարգադրիչ յանձնաժողովոյ:—Հոգաբարձու Յակոբ Տէր-Յովհաննիսեան, գործավար Հ. Ջալալեան:

—

Բագուի «Каспій» լրագիրը հաղորդում է, որ երբ Բագւում հեռագիր ստացվեց Գրիգոր Արծրունու մահվան մասին, հասարակութեան ցանկութեամբ «Աւազակներ» պիէսայի ներկայացումը ընդհատվեց և յետաձգվեց:

—

Բագուաբնակ երեք անձինք, պ.պ. Սարգիս Աւագեան, Յակոբ Խօջամիրեան և Արշակ Եարամիշեան հեռագրով մեզ հաղորդում են, որ գրվում են «Մշակի» մշտական բաժանորդներ, այսօրվանից սկսած: Ամբողջ հեռագիրը կը տպագրվի Գրիգոր Արծրունու մահվան առիթով սկսած հեռագիրների շարքում:

—

Ուրախութեամբ մատնանիշ ենք անում մի պսակի վրա, որ դրված էր Գրիգոր Արծրունու դագաղի վրա, միւս հարիւրաւոր պսակների շարքում.—դա Երևանի մահմետականների կողմից դրկված պսակն է, յատուկ ներկայացուցչի ձեռքով: Մեր մահմետական եղբայրակիցների այդ ցոյցը և ոգևորիչ և թանգագին է:

—

«Տարազի» վերջին № 50-ը ամբողջապէս նուիրված է Գրիգոր Արծրունուն: Համարի մէջ տպագրված է Արծրունու երիտասարդական և արդէն հասակը առած ժամանակի պատկերը. նոյնպէս և այն պատկերը, որ ներկայացնում է անմոռանալի հանգուցեալին դագաղի մէջ:

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՔԱՂՈՒԱԾՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅ ԼՐԱԳԻՐՆԵՐԻՑ

Վանի առաջնորդական փոխանորդ եղած է Արճէշի վանահայր Սահակ վարդապետ Տ. Գրիգորեան, Վանի Ազգային գաւառական խառն ժողովի որոշմամբը:

—Հալէպէն կը գրեն թէ Թիւրք երևելիները շատ նախանձոտ աչքով կը նայէին Հալէպի հայերի երևելիներէն Մարգարեան Մարկոս էֆէնտիին վրա և կը ջանային մէջտեղէն վերցունել այդ անձ: Մի օր, երբ Մարգարեան Մարկոս էֆէնտին իր ընտանիքով մէկտեղ ամարանոցը կը գնուէր մի քանի Թիւրքերը գիշերանց յարձակելով տանը վրա հրացանի հարուածներ կը պարպեն սպաննելու համար Մարկոս էֆէնտին. բայց իրանց հարուածների զոհ կերթայ փոխանակ Մարգարեան էֆէնտուն իր կինը որ վեց ամսական ալ յղի է եղեր: Տեղական Թիւրք կառավարութիւնը խուզարկութիւններ կանէ գտնելու համար յանցաւորները...»:

—Կ. Պօլսէն և Թիւրքիայի ուրիշ քաղաքներէն եկած լուրերէն կը տեղեկանանք որ արդէն սկսեր է առատօրէն ձիւն տեղալ այդ տեղեր:

«Սիլիսթրէէն հաղորդում են որ տեղւոյն հայերը մի ընթերցարան հաստատած են, որի համար սկսեր են այլ և այլ գիրքեր և լրագիրներ բերել տալ: Անոնք որ այս բարենպատակ հաստատութեան կուզեն նուէրներ անել, կարող են իրանց նուէր ղրկել անոր հետևեալ հասցէովը՝ Cabinet de Lecture arménienne (Bulgarie) SILISTRIE:

«Էնկիւրի նորահաստատ երկաթուղու ընկերութեան՝ ապրանքներ փոխադրելու համար պահանջած գները շատ թանկ կը գտնեն տեղական վաճառականներն և երկրագործները, որոնք այդ իմաստով մի աղերսագիր դրկած են Բ. Դուռը: Էնկիւրիէն Նիկօմիդիա ապրանք փոխադրելու համար, օխային 13-էն 15 փարա կառնեն ջորեպաններն և ուղտապանները, մինչդեռ երկաթուղու ընկերութիւնը օխային 18—20 փարա կը պահանջէ»:

Ժամանակաւոր խմբագիր՝ Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հրատարակիչ Մ. ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

Дозволено цензурою, Тифлисъ, 28 Декабря 1892 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.